

Եռանկյուններ 3

— Վա՛հ,— ասում է,— ես էսպես
տղամարդ եմ էլել ու մինչև էսօր չեմ
իմացել...

Քաջ Նազար

Վերջին ժամանակներս Քաջ Նազարը և հսկաները սկսել են շատ հետաքրքրվել
երկրաչափությամբ: Մեր հերոսները հատկապես սիրում են ուսումնասիրել
եռանկյունների հատկությունները:

Մասնավորապես, Նազարին հետաքրքրում է հետևյալ խնդիրը. հարթության վրա
տրված է N հատ եռանկյուն: Նազարը ցանկանում է գտնել միմյանց մեջ ներդրված
եռանկյունների ամենաերկար շղթայի երկարությունը:

Օգնե՛ք մեր հերոսին պարզել իրեն հետաքրքրող հարցի պատասխանը:

Մուտք

Մուտքի առաջին տողում տրված է եռանկյունների N ($1 \leq N \leq 1000$) քանակը: Հաջորդ
 N տողերից յուրաքանչյուրը պարունակում է վեց ամբողջ թիվ՝ x_{i1} , y_{i1} , x_{i2} , y_{i2} , x_{i3} և
 y_{i3} ($-10^8 \leq x_{ij}, y_{ij} \leq 10^8$), i -րդ եռանկյան գագաթների կոորդինատները:

Երաշխավորվում է, որ ոչ մի եռանկյան գագաթներ մեկ ուղղի վրա չեն գտնվում:
Նշենք, որ եռանկյունները կարող են նաև հատվել:

Ելք

Ելքում արտածել մեկ ամբողջ թիվ՝ խնդրի պատասխանը:

Օրինակ

Մուտքը.

```
3  
0 0 1 1 0  
0 0 2 2 0  
0 0 5 5 0 5
```

Ելքը.

```
2
```